ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՂԵՌՆԻ ԻՐՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նորից ու նորից ուսումնասիրելով Օսմանյան Թուրքիայի կողմից հայերի նկատմամբ իրականացրած եղեռնի փաստագրական նյութը, որ պահվում է Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ), վերստին համոզվում ես, որ հայ ժողովրդի յուրաքանչյուր սերունդ յուրովի է ընկալում ու վերապրում եղեռնի խորհուրդը:

Փաստաթղթերը նորից պարտադրում են վերապրել եղեռնը նախորդող անցքերը, բուն եղեռնը, որբացած հայ մանուկների դեգերումները, զաղթականների քարավանները, ականատեսների հիշողությունները, մեծաքանակ մարդկային ու նյութական կորուստները և իհարկե՝ հայերի փոքրաթիվ, բայց հերոսական ինքնապաշտպանական կռիվները:

Փաստաթղթերի փոքրածավալ այս հավաքածուն մի չնչին մասն է եղեռնը փաստող այն հազարավոր վավերագրերի, որ պահվում են ՀԱԱ-ում:

Ժամանակ առ ժամանակ հանրությանը ներկայացնելով եղեռնին առնչվող փաստաթղթերը, կարծում ենք վերջապես այն կդատապարտվի բոլոր երկրների կողմից, որպեսզի այլևս երբեք նման ոճրագործություններ չկրկնվեն:

Փաստաթղթերը բերված են բնագրին համապատասխան՝ որոշ կետադրական և ուղղագրական շտկումներով:

ՕՍՄԱՆՅԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՕՆԻԿ ԴԵՐՁԱԿՅԱՆԻ ԶԵԿՈՒՅԱԳՐԻՑ ՎԱՆԻ ԿՈՒՍԱԿԱԼ ՃԵՎԴԵԹ ԲԵՅԻՆ՝ ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1914թ.

Կարճկանէն տակավին նոր վերադարձած, ուր փութացեր էի պաշտօնակից Միւնիք էֆենդիի հետ, հարկ կը համարեմ Ձեր վսեմության ներկայացնել Կարճկանի և Գաւաշի վերջին ցաւառիթ դեպքերը, իրենց ծագման բուն պատճառներու մեջ, որպէսզի ոչ միայն անգամ մը ընդմիշտ փարատի անոնց շուրջ տարածայնուած խոշոր և դժբախտ թիւրիմացությունները, այլ որպէսզի հնարաւոր դառնայ միջոցներ ուսումնասիրել և ձեռք առնել հիմնապէս հաստատելու համար այն փոխադարձ վստահութիւնը, որուն հավասար չափով պէտք ունի թէ՝ կառավարութիւնը, և թէ՝ մեր դժբախտ նահանգներու տառապող հայ ժողովուրդը:

ՀՐԱՊԱՐԱ-
ԿՈՒՄՆԵՐ

Այս բոլոր իրադարձութիւններուն անմիջական առիթը կը կազմէ Բէլուի դէպքը, զոր հարկ է վերածել նախ իր բուն համեմատության, ըստ արժանւոյն ճշտել կարենալու համար տեղի ունեցած տարօրինակ խուճապը, զոր կարելի էր կանխել, եթէ Ոստանի գայմագամը քիչ մը պաղարիւնով և քիչ մը խոհեմութեամբ ուզենար կամ կարենար շարժել:

Բելուի դէպքը

Դեկտեմբերի 3-ի չորէքշաբթի օր, Բելու գտնուող երկու ժանդարմներէն մէկը կը նշմարէ գիւղին օտար դէմք մը և հակառակ գիւղապետին հաւաստիքներուն, թէ օտարական մը չէ ան, զէնքով կը հետապնդէ զայն մինչև անոր մտած տան դուռը, ո՞չ միայ սպառնալով անոր, այլ և անլուր լուտանքներ տեղալով հայ կրօնի և ցեղին դէմ: Օտար կարծուած անձը, որ այդ պահուն Բելու իջևանած չէթայի՞ մը անդամ էր, կփակուի տան մէջ, չի պատասխանիր լուտանքներուն, յուսալով, որ գիւղացիք կը յաջողին համոզել և ամոքիլ ժանդարմը: Այդ պահուն է, որ Բելուեցի Սարգիս անուն ծանօթ մարդասպանը, որ Սահմանադրութեան հռչակման առթիւ ներման արժանացած և զինուորութիւնէ ալ ազատած էր – ժանդարմի աղմուկին վրայ՝ կը հասնի հոն և զայրացած անոր հայհոյանքէն՝ հրացանը կը պարպէ անոր վրայ:

Ժանդարմը կսպանուի հոն, իսկ անոր ընկերը կապաստանի մարագ մը: Խուճապը կիյնայ գիւղին մէջ: Մինչ ոմանք կը ջանան համոզել միւս ժանդարմը, որ մարագէն դուրս ելլէ և դժբախտ պատահարը քննէ - չէթան դուրս կելլէ գիւղէն հինգշաբթի առտու վաղ ու կը հեռանայ, նոր բարդութիւն մը չստեղծելու համար հոն:

Ժանդարմը մարագէն կելլէ, լուր կուտայ Ոստանի գայմագամ Շիւքրի Բէյին, որ այդ օրերը եկած էր Սորբ, և ահա գայմագամը ժանդարմներու ջոկատի մը հետ կը մտնէ գիւղ միւս առտու (հինգշաբթի) քննութիւն կատարելու: Քանի մը ձերբակալումներէ և խնդրին հանգամանքին տեղեկանալէ ետք՝ Շիւքրի Բեյ վառել կուտայ իր իսկ ըսելով, 5-7 տուն, որոնք կը պատկանէին Սարգիսին և անոր կարծեցեալ մեղսակիցներուն:

Գայմագամի մարդիկը այդ առթիւ կսպաննեն հոտ չորս Բելուցիներ, ծեծի տակ, վայրէնաբար: Կարևորը սա է, որ գայմագամին հեռանալէն ետք, գյուղացիք սարսափահար կը ցրուին շրջակայ գիւղերը, երեսի վրայ թողնելով ամէն բան՝ տուն, ինչք և տաւար:

Այս օրը, հինգշաբթի, 4 դեկտեմբեր, գայլեր կուգան անտէր մնացած ոչխարներ կոտորելու, իսկ հրդեհը կսկսի ծաւալել մերձակայ տները: Անոր վրայ է, որ գիւղէն ելլող չէթան լսելով այս անտերութիւնը, ուրբաթ, դեկտեմբեր 5-ին ետ կուգայ, մէկ կողմէն ժողովուրդը հաւաքելու ու սրտապնդելու, միւս կողմէն հրդեհը մարել ջանալու համար:

Նոյն օրը, ուրբաթ, գայմագամը վերստին գիւղ կուգայ, բայց այս անգամ հետը ունենալով 2-300 քիւրտեր, որոնք տօպրակներ շալակներուն՝ եկած էին Բէլուն կողոպտելու: Գայմագամը իր ըսելով՝ կերթար եղեր հոն՝ նոյնպէս հրդեհը հանգցնելու և նոր քննութիւն մը կատարելու: Բայց, դժբախտաբար, իր այդ մտադրութիւնը Բելուցիներուն հաղորդելու կամ ապացուցանելու ոևէ միջոց ձեռք չ՚առներ, այն ինչ քիւրտ խուժանին ներկայութիւնը հոն չէր կրնար հաւաստիք մը լինել խաղաղասէր մտադրութեան

մը: Գիւղը գտնուող չէթան կը պարտաւորի կրակ բանալ խուժանը ետ մղելու համար: Գայմագամը իրեն հանդէպ կը նկատէ այդ ընդդիմութիւնը և ինքն ալ կը հրամայէ իր ժանդարմներուն նոյն ձևով պատասխանել: Ընդհարումը կը տևէ առաւոտեան ժամ 9-էն (ըստ եւր.) մինչև երեկոյեան ժամ 5, արևմուտը: Մութը կոխելուն պէս՝ կրակը կը դադրեցնին երկու կողմն ալ ու կը հեռանան, առանց ոևէ կորուստի երկուստէք:

Բելուայ չէթային զգուշաւոր ընթացքը

Այդ դէպքէն ետք ոևէ հանդիպում չ'ունենար գայմագամը ոևէ չէթային հետ: Եթէ չէթան հակապետական ընթացքի մը մէջ գտնուել ուզէր՝ չէր քաշուիր գիւղէն չորքշաբթի գիշերն իսկ առանց դպչելու գիւղը մնացած միւս ոստիկաններուն, կ'ընդդիմանար հինգշաբթի օրը գայմագամի գիւղ մտնելուն և տներ վառելուն, չէր բացակայիր հետևեալ հինգշաբթի օրը, իսկ ուրբաթ օրուան ընդհարման մէջ սոսկ պաշտպանողականի վրայ չէր մնար, որուն հետևանքով հազիւ մէկ քիւրտ մը կը վիրաւորուի, և չէր քաշուիր անհետանար ուրբաթ իրիկուն՝ մութը իջնելուն պէս:

Կը շեշտեմ այս կէտերը, ցոյց տալու համար, թէ քիչ մը շրջահայեցութիւն պիտի բաւէր ըմբռնելու համար չէթային զուտ ինքնապաշտպան տակտիկը, որով բելուայ խնդիրը իր սաղմին մէջ պիտի կրնար խեղդուիլ:

Սակայն գայմագամը այդպես չընմռներ իր պարտականութիւն...

ՀԱԱ, ֆ. 242, ց. 1, գ. 78, թ. 1-2 և շրջ.: Ինքնագիր: Ձեռագիր:

ՎԱՆԻ ՀԱՅ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՓՈԽԱՆՈՐԴ ԵՊՍԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆԻ ՁԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՈՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԹՈՒՐՔԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

28 մայիսի 1915թ.
Վան

Վեհափառ հայրապետ

Վասպուրականի վերջին աղետներու տեղեկագրությունը ուղղելով Ձերդ ս. օծության Մայիս 20 թվակիր մեր ընդարձակ գրով, արդեն ըսած էինք, որ նահանգին խոշոր վանքեր ու եկեղեցիներ այրված են: Ի լրումն այդ տեղեկության կուգանք կրկին հայտնելու, որ նահանգին մեջ գտնված վարդապետուց ու քահանայից առավել քսան կան սպանված, իսկ եկեղեցական գույք, անոթ, զգեստ, գրամն հացը կողոպտված, փչացված ու այրված են, որոնց մեջ են քաղաքիս Ձայնկոյսներ, ս. Գակսի և Հայկազունք եկեղեցիներն, նաև Վարագ, Կտուց, Անապատ, Աղթամար և ուրիշ շատ մը վանքեր և այլն:

Ուրեմն այսօր Վեհափառ հայր, քաղաքիս քանի մը եկեղեցիներեն զատ քաղաքիս մնացյալ նույնպես նահանգեն խոշոր եկեղեցյաց ու վանքերից մեջ լռած են եկեղեցական աղոթք և ժամերգություն, մինչև անգամ

հոգևոր անհրաժեշտ մխիթարութեններ իսկ զուրկ կը գտնվի հայ ժողովուրդը՝ մանաւանդ՝ ի գյուղերու, ինչպես են թաղման, մկրտության պաշտամունի հարցը, այն պատճառով, որ անոնց մեծ մասին մեջ թէ եկեղեցական պաշտոնյայի և թե եկեղեցական գրիանք չկա:

Կարելի պիտի ըլլար այրված եկեղեցյաց մեկ մասի վերաշինությունը այժմեն սկսել, մանավանդ ի գյուղերույս, ուր փայտ և ուրիշ շինվածանյութերի դյուրությամբ կրնան ձեռք բերվել, եթե մեկ գումար ըլլա տրամադրելի վարպետ գործավորներուն վճարելու համար, իսկ մեկ մասին մեջ ալ, ուր տաճար մը մնացած է, որ քարաշեն ըլլալուն համար չեն կրցած այրել և կամ մատուռ մը, ավանդատուն մը մնացած են անկիզելի, կարելի է անմիջապես ժամերգություն սկսել, եթե գտնվեն եկեղեցական անհրաժեշտ մատյանք և գույքեր, ինչպես սկիհ, շուրջառ հարցը:

Կուգամ խոնարհաբար այս կետերը ներկայացնել Վեհափառ հայրությանդ բարձր ուշադրությանն և խնդրել, որ շնորհ ընեք առայժմ յուրաքանչյուր տեսակեն քանի մը հարյուր կտոր գրիանք, գլխավորապես ժամագիրք և անհրաժեշտ անոթներ ու զգեստներ տրամադրելի ընել ու ղրկել հրամայել, նաև գոնե կարևոր գումար մըն ալ հատկացնել գյուղական եկեղեցիներու վերաշինության գործին համար, որպեսզի քանի դեռ ժամանակ է, ձեռնարկվի անոնց մեկ մասին վերաշինությունն, որոնք մեծ ծախքի կարոտ չեն, որով միայն կարելի պիտի ըլլա խափանված ժամերգությունները վերսկսել և հայ ժողովուրդը զրկյալ չի թողուլ հոգևոր մխիթարութեններ:

Ասոր հետ մեկտեղ կուգանք դարձյալ հայտնելու, որ վիճակին մեջ ս. մեռոնն ալ պակսած էր արդեն, անցյալ տարի պատերազմին պատճառով չի կրցանք ուզել ու բերել տալ, ուստի կը խնդրենք, որ շնորհ ընել բարեհաճեք բավականաչափ մեռոն հարմար միջոցով մը ճամփել, ի վիճակս, որով կարող ըլլանք դեռ կանգուն մնացած, բայց ոգիապղծված տաճարները սրբագործել ս. մեռոնով և ժողովրդական ուրիշ հոգևոր մխիթարության գործին հատկացնել:

Սպասելով մեր սույն ու նախորդ գրությանց պատասխաններուն, մնամք ամենահնազանդ որդի Ձերդ վեհափառության և կարոտ համբույրի ս. աջույդ:

Առաջնորդ փոխանորդ Վանա
Եզնիկ վարդապետ Ներկարարյան

ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 54, թթ. 21 և շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵԼԻՔ-ԹԱՆԳՅԱՆԻ ՆԱՄԱԿԸ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՈՒ ՎԱՆԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

17 ապրիլի 1915թ.
Հին-Նախիջևան

Վեհափառ Տեր,

Ապրիլի 8-ին սանիտարական խմբով գնացինք Մակու-Քիշմիշքափա-Ս. Թադեոս Առաքելո գյուղ, ապահովեցինք բոլոր գաղթականներին Բաքվից ստացած գումարներով մինչև հուլիսի 1-ը: Նույն օրը եկան Աբաղայից 60 հոգի, Նզարավենից 20 հոգի, Մանդանից 20 հոգի և ապա 60 հոգի, բոլորը փախել են մահից՝ թողնելով երեխաներ, կանայք տաճիկ-քրդերի ձեռքին: Ամսիս 5-ին պահանջել են Վան քաղաքից 6000 լիրա տաճկական և 6000 հրացան: Հայերը ժամանակ են խնդրել, նրանք չեն տվել: Ամսիս 8-ին սկսել են խաբելով զենքերը գյուղերից ժողովել և տղամարդկանց հավաքել ճանապարհների կարգավորման համար և տանելով մյուս գավառ, բոլորին կոտորել են և շարունակել Վանի, Արճեշի, Բերկրու, Աբաղայի բոլոր գյուղերում կոտորածներ, տղամարդիկ թողնում են տուն տեղ քրդերի ձեռքին և փախչում ով որտեղ կարող է: Սոսկալի- սրտաճմլիկ տեսարան էր, երբ 100-ով մտան Թադեոս Առաքյալ և քարերը լիզելով Աստծուն շնորհակալություն արին մահվանից ազատվելու համար: Ամսիս 10-ին շրջապատում են Վան 800 ասկերով, երկու թնդանոթով և քրդերով: 10.000 զինված համախմբված հայեր ամեն քաջությամբ դիմադրում են և այսօր 7-րդ օրն է, որ կռվում են թշնամիների հետ: Այս մասին խոսեցի Մակուի գեներալի հետ, որ ամենամեծ սրտացավությամբ ընդունեց և իսկույն հեռագրեց բարձրին: Ես նույնպես հեռագրեցի շատ տեղեր՝ խնդրելով օգնություն հասցնել: Եթե շուտափույթ օգնություն չհասցնեն ռուսաց զորքերը, հայ կամավորները, Հայաստանի այդ մասերում բոլորովին հայ չի մնա:

Ձերդ վեհափառության
Խոնարհ որդի Ներսես եպիսկոպոս Մելիք-Թանգյան

ՀԱԱ, ֆ.57, ց. 5, գ. 29, թ. 126 և շրջ.: Ինքնագիր:

ԿՏՈՒՑ ԱՆԱՊԱՏԻ ՎԱՆԱՀԱՅՐ ԵՂԻԱ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ԳԵՎՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ՎԱՆԻ ՇՐՋԱԿԱ ԳՅՈՒՂԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՈՒ ԿՏՈՒՑ ԱՆԱՊԱՏԻ ԱՂԵՏԱԼԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

8 հունիսի 1915թ.
Վան – Կ. Անապատ

Վեհափառ Տեր,

Որդիական խորին ակնածությամբ Ձերդ Վեհափառության ս. աջը համբուրելով՝ բարձր ուշադրությանդ կ'հանձնիմք հետևյալ խնդրանքս:

Ձերդ ս. օծությանն հայտնի է, որ Վանա շրջակա եղող գյուղերն ու ավանները օսմ. կառավարության մոլեռանդության զոհ գնացին. բազում երիտասարդները բռնավորի սուրին տակը ջարդվեցան, շատ մը կիները ու կույս աղջիկները գերի տարվեցան անդարձ կերպով: Նահատակված այրիներու ու որբերու հեծեծանքն է՝ որ կլսվի թալանված ու ավերված գյուղերի մեջ, անոնցմե կհիշեմ մեր թիմ եղող Ալյուր և Մարմետ գյուղերու մեջտեղ

ունեցած կոտորածները, այս ավերակ գյուղերուն մեջ այրիներն ու որբերն են, որ կուգան ու հաց կմուրան և շատ մը երեխաներն ալ անոթի ու մերկ մնալուեն՝ համաճարակ հիվանդության մը ենթարկված էին ու կմահանան:

Վեհափառ Տեր, անմեղ զոհերեն շատերը կալվածատերեր են, որոց հունձքերը գետին պիտի մնան, եթե երբեք այս մասին որոշ տնօրինություն մը չլինի: Կտուց Անապատն ալ, որ իր ժողովուրդին կապված էր և կօգտվեր անոր աջակցութենեն, այժմ տնտեսական խիստ տագնապի մեջ կգտնվի: Թուրք կառավարության կողմե կղզյակին մեջ իբր պահակ դրված 14 ոստիկանները սպանեցին վարդապետ մը, դպիր մը, մակույկավար մը և մշակ մը, եկեղեցիի մեջ աչքի առջև գտնված կարգ մը արծաթ, անոթները, կերպաս կարկասները, գույքերը, վարդապետներուն սենյակներեն աչքի զարկած ապրանքները կողոպտեցին ու տարան, անասուններն ալ ագարակեն տարվեցան: Վանա մեջ գտնված 30-40-ի չափ խանութներու հրո ճարակ լինելն ևս ավելի դժբախտության մատնեցին վանքը. անոնց եկամուտովն էր, որ ամեն մեկ նեղությունները կ'հոգացվեին: Դրամական եկամուտները իսպառ տարած են, միայն Թիֆլիսի կալվածի տարեկան վարքն է մնացած, որ տակավին ղրկված չէ, ուստի հատկապես կխնդրվի Ձերդ Վեհափառությենեն, որ շնորհ ընեք գրել տալ Թիֆլիսի ս. Առաջնորդին, որպեսզի հանձնարարե տեղվույն գործակատարին՝ Անապատին ինկած բաժինն ուղարկե, մեր նեղություններ հոգալու: Մնալով ընդմիշտ երախտապարտ և համբուրի ս. աջույդ, Վանի. Տեղ. Կտուց Անապատ:

Եղիա վարդապետ

ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 54, թթ. 28-29: Ինքնագիր:

ՏԵՂԵԿԱԳԻՐ ԿԱՐԻՆԻ ՎԵՐՋԻՆ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԶՈՀԵՐԻ ՈՒ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

27 Նոյեմբերի 1915թ.
Կարին

Տեղահանութիւնը կատարուած է 1915 Յունիս 27:

Բաբերդի գծով ուղուած է դեպի Երզնկայ:

Բաբերդի մէջ աղքատ կնոջ մը (Արեգնազ անուն) աչքերը հանելէ յետոյ սպաննած են: Կարինէն մինչև երզնկայ ուտեստեղենի համար գեղ գացող անձերը բոլորն ալ սպանուած են: Բաբերդէն ճանապարհ գցելուց Սմբատ եպիսկոպոսին հետ կեցուցեր են: Երզնկայ հասնելումն Հոտաղեան և Շապանեան ընտանիքը զատած են գաղթականներէն Կարնոյ կուսակալ Թասին պեյի հրամանաւ և պաշտպանութիւն վայելած են Մեմուրի Հոտաղեանի և աղահանքերու տնօրէն Շապանեան էֆենդիներու ընտանիքը, որոնց բարեկամութիւնը վայելած է եղեր կուսակալ բաշան:

Զաքարեանի հարսը և երկու աղջիկներ և ատամնաբուժ Մկրտիչ Ալպիրթեան գաղթելու դժկամութիւն ցոյց տուած ըլլալուն պատճառաւ առաջին երեքն անյայտացուցին, իսկ վերջինը սպանուած պահած, հրացանի

ձայները իմացանք,- կսէ պատմողը:

Երզնկա հասնելուս երկրորդ օրը ահաբեկող ձայներ իմացայ, Պոլիս Իսմայիլ էֆենդիէն հարցուցի որումն պատասխանը ի միջի այլոց հետևեալը եղաւ. «պիր շեյ եօգ տր պիր ազ փիսլիք վարտր թեմիզլատերլատ - բան մնալ չկա, բայց եթէ միայն կարգ մը աղտեղութիւններ մաքրել», քիչ վերջը արդէն զաւակներս իմացայ, որ Սմբատ եպիսկոպոսին գերեզմանատուն տարել են պատրաստ փոսի մը առջև ծնկաչոք նախ երկու ձեռքերը կտրել, յետոյ գլուխը կտրած և փորը ճեղքելով մեջը դրած են և այդպէս փոս ձգած են:

Կաւելացնե, թէ շաբաթներ յետոյ Տրապիզոնցի թրքացրած հայ աղջիկ մը ցոյց տուաւ ինձ, որով եպիսկոպոսին մորթոտել էին:

Եվ ամիսներ յետոյ դեղագործ Միւհամետ էֆ. հագուստեղենի խանութը գործող իմ երկու զաւակներս պատմեցին ինձ, որ եպիսկոպոսին կղերականի զգեստները և Մ. Ալպիրթեանի ռետինկոթը տեսած են խանութին մէջ, ինձ էլ ցույց տալով Սրբազանին կնիքը և այցեքարտը:

«Ինձ հետ ուղեկցող 500 հինգ հարիւր սայլերով գաղթականութիւնը Քիմախի կիրճը կոտորեցին և թալանեցին, որոնցմե առնուած աւարը երզնկայի մէջ երկար ատեններ վաճառուեցաւ, իսկ եկեղեցական արծաթեայ անօթներ և խաչեր ուղարկուեցին Կ.Պոլիս»:

Պոլսեցի թուրքացած Վաղարշ Ալիասեան, որ Մխթեսարֆ փաշաէն կը յարգուեր, մեզ համար բարեխոսութիւններ ընաւ անոր մոտ և մենք ապրեցանք Երզնկայի մեջ մինչև ռուսերու գալը:

Արմենակ Մաղաթեանի որդին իր խնդրանքով Պոլիս ղրկուեցաւ, ուր կապրի հայրը Մարութեան էֆենդին պատերազմը սկզբեն ի վեր:

Տեր Մելքիսեթեկեան գերապայծառին մասին իմացայ, որ Ակն, իսկ գերապայծառ Քիւչուրեան կը գտնուի Սեբաստիայ:

Փարէզ Հոտաղեան

ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 139, թ. 54 և շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

ԽՈՐԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԶԵԿՈՒՅԱԳԻՐԸ ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԷՐԶՐՈՒՄՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ, ՇԱՐՈՒՆԱԿՎՈՂ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՈՒ ՌՈՒՍԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

11 մարտի 1916թ.

Ձերդ վեհապառությանը պատիվ եմ ունեցել զեկուցելու, որ Կովկասյան զորաբանակի հրամանատար գեներալ Յուդենիչի թույլտվությամբ քսան էրզրումցիների թույլ էի տվել Էրզրում գնալ թե աջակցելու կոտորածից ազատված հայության մնացորդներին և թե տեր լինելու իրենց տուն ու տեղին:

Ամենավստահելի աղբյուրներից ստացածս տեղեկություններից

երևում է, որ մխիթարական ոչինչ չկա:

Տաճկական վայրագությունը, հուրը և սուրը ոչնչացրել է ամեն ինչ. Էրզրումում հայություն չկա: Գնացողները տեսել են այնտեղ 36 հոգի միայն թշվառ կանայք և երեխաներ: Կանայք տեղավորված են եղել մի ինչ որ բնակարանում և ենթարկված են եղել զանազան պատահարների, որոնց մեջ անպատվաբեր ու ամոթալի դեր է ունեցել մի հայազգի սպա: Գալիս են Դերձանի կողմերից մերկ, բոկոտն, հյուծված, բռնաբարված կանայք և օրիորդներ, որոնք մնում ենանպաշտպան: Չկա մի մարմին, որ կերակրե, պահպանե, հագցնե և ապահովությամբ փոխադրե դեպի ներս:

... մեջ տեղավորված են հայերի ապրանքները, որոնք թեև կրում են իրանց վրա հայերի՝ սեփականատերերի նշանագրերը, այնուամենայնիվ տեղական զինվորականվարչության կողմից չի նկատվում որևէ տրամադրություն ապրանքները սեփականատերերին վերադարձնելու վերաբերությամբ:

Ստացված նամակների մեջ ասված է հետևյալը. «Սանասարյան դպրոցի գույքը, որ գրավված էր իբր օսմանյան կառավարության սեփականություն, վեհապառ կաթողիկոսի դիմումով վերադարձուցին իր սեփականատիրոջ... միմիայն վեհափառ հայրապետ կարող է փրկել թե եղած ապրանքներ և թե տեր տիրական չունեցող հայու օր օրվան վրա քանդվող տներ»: Ստացված տեղեկություններից երևում է, որ տաճկական զորքը նահանջելով կոտորում է դեռևս կենդանի մնացած հայերին: Երզնկայից եկածները պատմում են այնպիսի սարսափելի կոտորածների մասին: Բայց այնուամենայնիվ շարան-շարան փոքրիկ խմբերով դեպի Էրզրում են գալիս կանայք, օրիորդներ, երեխաներ. հյուծված, տանջված, մերկ, բոկոտն:

Վեհափառ տե՛ր, ես չեմ ուզում կանգ առնել երկար թշվառության վրա, բայց այնուամենայնիվ անկարող եմ չշեշտել մի հանգամանքի վրա, որը չափազանց ծանր է տանել մի ժողովուրդի համար, որը ամեն ինչ զոհում է անկեղծորեն մեր բանակի հաջողության համար, և որը այդ բանակից հալածանք է նկատում: Էրզրում գնացողներից մի մասին մի քանի օրով բանտարկել են, որովհետև նրանք անգիտակ են եղել և չեն ներկայացրել ինձանից ստացած վկայականները Սարիղամիշի կոմենտանտին, իսկ մյուսներին և առաջիններին բանտարկությունից ազատելուց հետո իրավունք են տուել մնալ Էրզրումում մինչև մարտի 9-ը:

Թուրքերին, պարսիկներին, ասորիներին, հույներին և վրացիներին թույլ է տրվում առևտրական գործառնություններ կատարել, խանութ բանալ, իսկ հայերին արգելում է: Էրզրումում երևած հայերին անմիջապես հեռացնում են, նախապես բանտարկելով նրանց:

Այս բոլորը համառոտակի նկարագրելուց հետո թույլ եմ տալիս ինձ Վեհափառ Տեր միջնորդ հանդիսանալու և խնդրելու, որ հարկավոր է կարգադրեք թե հայերի իրավունքը Էրզրումում պաշտպանելու և թե թշվառ մնացորդների կյանքը փրկելու համար:

Խորին ակնածությամբ խոնարհ որդի՝
Խորեն եպիսկոպոս

ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 111, թթ. 1-2: Ինքնագիր:

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԴԻՄՈՒՄԸ ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ՝ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ՈՒ ԳԵՐԵՎԱՐՎԱԾ ԹՈՒՐՔԱՀԱՅԵՐԻ ՍԻԲԻՐԻ ԱՔՍՈՐԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԳՏՆՎԵԼՈՒ, ՆՐԱՆՑ ԾԱՆՐ ՎԻՃԱԿԻ ԵՎ ԱԶԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԻՋՈՑՆԵՐ ՁԵՌՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

29 դեկտեմբերի 1916թ.

Վեհափառ Տէր

Ծանր և սրտակեղեք է այն ճիշը, որ կը հասնի մեզ հեռու հիւսիսէն, Սիպիրիոյ, գերութեան բիրդ շղթաներու ներքև հեծող 2000-է աւելի թուրքահայ ջահել գերիներու: Անոնք կտրիճ, առոյգ երիտասարդներ են, որոնք մեր ապագայի կործանուած մէկ-մէկ օջախներու վերակազմողներ պիտի լինեն, սակայն այսօր չար բախտի սև ճակատագրականութեամբ իբրև գերիներ կը տուայտէն, կը մաշին յուսահատ, ամեն կերպ անմխիթար և մեզ բոլորէս մոռացուած: Ահա այս կենսական խնդիրը «Արևմտահայ Յանձնաժողովս» Ձերդ Վեհափառութեան ուշադրութեանը կը յանձնէ:

Յայտնի է, թէ թուրքական բանակի մէջ գտնուած հայ զինուորութիւնը ինչ անողոք կեանքի վայրկեաններ ապրեցաւ, երբ բռնի քշուեցաւ պատերազմի դաշտը ու մասսայօրէն զինաթափութեան ու ջարդի ենթարկուեցաւ, իբրև «խայինն» տարր բանակի և Օսմանեան հայրենիքի համար: Ահա տասնեակ հազարավորներէն միայն 2000-ի չափ հայ զինուորներ, այս կերպ կամ այն կերպ, յաջողեցան անցնել ազատարար ռուս բանակի կողմը, որոնք իբրև թշնամու գերիներ, թուրք զինուորի հետ քշուեցան Սիպիր... Սիպիր, ուր ենթարկուած կը մնան աւելի վատթար պայմաններու մէջ, քան թշնամի պետութեանց գերիները, քան նոյն իսկ թուրք գերին: Ահա թէ ինչու:

Մեզ հասած փաստերը հետևեալը կը պատմեմ անոնց այդ վիճակէն: Հայ գերիները ներկայիս կը գտնուին երկու սուրի միջև, որովհետև երբ իբրև գերիներ ռուս կարմիր խաչին կը դիմեն, անոնք կը պատասխանին, թէ դիմեցէք ձեր դաշնակից պետութեան՝ Աւստրիական կարմիր խաչին, իսկ վերջիններս ալ կը պատասխանեն, դուք Ռուսիոյ բարեկամներ էք, թող անոնք ձեզ օգնեն: Ահա դժոխային կացութիւն: Դարձեալ այս պայմաններու մէջ մերկ, անօթի, ենթարկուած ծանր աշխատանքներու, է՛ն վատթար կեանքով կապրին, քան թուրք ու քուրդ գերին: Յուրտի դեմ պատսպարելու լաթեր անգամ չունին և կը պարտադրուին նոր շորեր ստացող գերման կամ թուրք գերիներէն անոնց մաշուած, պատառոտուած զգեստներ գնել, այդ ալ յաճախ կը մերժուի կամ կը գլացուի:

Հապա որքան զարհուրելի է մոռացութեան և զրկանքի այս պայմաններու մէջ, անոնց հոգեկան աշխարհը, երբ կը տեղեկանան հայրենիքի աւեր վիճակը, իրենց սիրելիներու կորուստը կամ թափառական անուք դրութիւնը: Մերթ իրենց ազատուած փոքրիկներու, ծեր մայրիկի, կնոջ ձայնը կլսեն, որ օգնութիւն կը խնդրէ. «ճար մը արա կամ դուն եկ, մեզ տար այդտեղ»: Ահա հոգեկան այս շանթահարող տանջանքը, աւելանալով առաջնի վրայ, շատերը կիսախենթ դրութեան մը մատնած է ներկայիս, ոմանք նոյնիսկ մահացած են արդէն:

Այս դժոխային հանգամանքներու մէջ անոնք կը տառապին, գերիէ մը աւելի գերի, անոնք հոգեկան - բարոյական և նիւթական ֆիզիկական տանջանքի ճիրաններու մէջ կը մնան իբրև կենդանի նահատակներ: Որքա՞ն ծանր է մեզ համար, երբ մեր հէք գերի եղբայրները հոն կը մնան անուշադիր, մոռացուած կարծես: Արդ քանի որ Վեհափառ Հայրապետիս և Դումայի անդամ պ. Բաբաջանեանի կողմէ մինչև այժմ եղած դիմումներն ու միջնորդութիւններն մնացին անհետևանք, առայդ կուգանք ներկայիս կրկին խնդրելու, որ յատուկ խորհրդակցութեան նիւթ ըլլար հայ գերիներու վիճակը: Գէթ մինչև անոնց ազատումը հետևեալ խնդիրներուն ուշադրութիւն դարձուէր:

Ա.) Յատուկ հոգևոր պաշտոնեայ մը ղրկուէր անոնց մնայուն այցելութեան և մխիթարանքի, որ մոտիկէն ծանոթանար գերիներու վարած կեանքի հետ հանգամանօրէն:

Բ.) Կազմուէր անոնց սթաթիսթիք ցուցակագրութիւնը մանրամասն:

Գ.) Ստեղծուէր դիւրութիւններ, որ գերիները հնարաւորութիւն ստանային փնտրելու իրենց սիրելիները, կամ միջոց ընձեռնուէր անոնց անվերապահ կապ պահպանելու, իրենց ընտանիքներու հետ:

Դ.) Առաջին առթիւ անոնց հասցուէր դրամական նպաստ, տաք շորեր, որմէ իսպառ զուրկ են ներկայիս:

Ե.) Նկատելով, որ Մոսկուայի Հայկ. Կոմիտէն աւելի յարմարութիւններ և դիւրութիւններ ունի ստանձնելու գերիներու վիճակի հոգացողութեանը, կառաջարկէինք, որ ինքը նախաձեռնութիւնը իր վրայ վերցնելով տանէր այդ կարևոր պարտականութիւնն ևս:

Վեհափառ Տէր

Գրաւոր ներկայացնելով Ձեր բարձր ուշադրութեան մեր խնդրանք-առաջարկները, խոնարհաբար կակնկալէնք, որ օր առաջ, Ձեր հայրապետական տնօրինութեամբ պիտի թեթևանայ հայ գերիներու տանջանքն ու զրկանքը, մինչև որ հասնի անոնց փրկութեան ժամը ու անոնք գան իրենց քանդուած օջախները վերականգնելու՝ ցանկալի հայրենիքին մէջ:

Դիւան Արևմտահայ յանձնաժողովի

Ատենադպիր՝

Ատենապետ՝ Ղ.Խանճեան

ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 90, թ. 47-48: Բնագիր: Ձեռագիր:

ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԼԻԱԶՈՐ ԿԱՐԱՊԵՏ ՎԱՐԴԱՊԵՏ ԵԿԱՆՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՑԱԳԻՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՍԱՍԻՆ

04 հունվարի 1917թ.

1916թ. դեկտ. 7-19 մեր օգնական լիազօրաց հետ, որոնք են Պ. Անտոն Ուզունեան, Պ. Կիրակոս Պոքսեան հրամանաւ Արժիապատիւ Գերապայծառ Առաքելական կառավարչին մերոյ ընդհանուր հայ կաթոլիկաց, որ ի

Ռուսաց կայսրութեանն Կարնէն գնացինք և այցելեցինք Սպերի շրջան Խոտրջուրի, Կրման, Ճիճապաղ, Կիսակ, Միջնքաղ, Խանդաձոր, Սունենձ, Կախմղուտ, Վակնայ, Քիղուտ, Արիգին, Վարի Մոխրակոյտ, Գորգանց, Վերին Մոխրակոյտ Բաղերն ու Կարմիրք և Ծիտկոնց գիւղերը: Իւրաքանչիւր քաղ թէ գիւղ ներկայ պատերազմէն առաջ ունէին քարաշէն եկեղեցիք նուիրական հարստութիւններով զարդարեալ, տասն և վեց եկեղեցիէն տասը՝ հրոյ ճարակ դարձուցած, մնացեալ վեցը՝ կիսով չափ քանդուած են: Այրուած եկեղեցեաց մէջ տեսանք պղնձեղէնք, երկաթեղէնք, մահճակալք, կարի մեքենաներ, կերակրոյ ամաններ և այլն անպէտք դարձած տնային իրեղէնաց կտորներ: Այս շրջանն ունի նաև 45 ուխտատեղի մատուռներ, համարյա ամբողջը քանդուած ու վնասուած վիճակի մէջ են: Եկեղեցեաց Աւետարանները, խաչերն ու միւս նուիրական սրբութիւնք՝ փողոցաց տիղմերու մէջ ոտքի տակ աւեր ու սրբոց պատկերաց շրջանակներ ջարդելէ ետքը՝ սուրեր ու զէնքեր փորձած են պատկերաց վրայ, ոմանց՝ աչքերը փորուած, ոմանց՝ երես ու թեերը կտրուած, ոմանց՝ ոտքերը ծակծկուած և այլն նախատական նշաններ, որք ետևէն նենգաւորաց եղեռնական ձեւաց գործքերէն: Միշտ սոյն այս վիճակի մէջ տեսանք Կիսկեմի և Թումկանց հայ էջմիածնականաց երկու եկեղեցիք թէպէտ, ոչ այրուած:

Խոտրջոյ շրջանի ժողովրդեան քանակութիւնը կը բաղկանար 1914թ. պատերազմէ առաջ վեց հազար երկսեռ անձինքներէ, ասոնցմէ հազար հինգ հարիւր քառասուն մարդ Ռուսաց կայսրութեան մէջ հացագործութեամբ աշխատող դասակարգը ազատուած է, իսկ մնացեալ չորս հազար չորս հարիւր վաթսուն հոգին, քսան և չորս վարդապետներով աքսորուած են թուրք կառավարութեան կողմանէ ի Թուրքիա կամ լաւ ևս «տեղի տանջանաց»-ը, իսկ աքսորումն սկսած է եղեր 1915 յուլիս 17-էն, կառավարութեան դաւաճան պաշտօնէից և բարբարոս զաբթիէներու հարստահարութիւններն արդէն սոսկացուցած է եղեր զխեղճ ժողովուրդը, տակաւին իրենց ճակատաց քրտինքով շինած հայրենի շինութեանց մէջ անգամ: Թաղերեն անցողներուն կարծես հրաման չկայ անարգել կերպով ուղղութեամբ անցնելու, այլ կը հրաւիրէ ամէն մի դուռ կամ պատուհան իրենց վրայ ի հայ լեզու գրուած ողբն ու կոծը կարդալ և սգալ, զոր մէկ երկուքը աստ կընդօրինակեմ «երանի այն անձաց, որ չեն տեսներ»: Միւսը՝ «մեռնողներն երջանիկ են, բայց չեն բանար գերեզմանաց տուներն զմեզ ընդունելու», ոմանք՝ «լեռներ մեր վրայ ինկէք, բլուրներ մեզ ծածկեցէք»: Այլք՝ «Մենք մեռնելու կերթանք, մնացողքդ մարդոյ պէս վարվեցեք»: Խոտրջուրցին չէ ունեցած այնքան փոխադրական միջոցներ, վասն զի լեռնային ըլլալով սայլեր արդեն չունէին, իսկ ունեցած ձի, ջորի և աւանակները՝ թուրք կառավարութիւնն անխղճօրէն բռնի յափշտակած ու բանակի ծառայութեան յատկացուցած է եղեր, որով Խոտրջուրցին ստիպուած է միմեան քիչ մը ճանապարհի պաշար շալկել և անցնել յետիոտն և երթալ չգիտեմ ո՞ւր...

Թողնելով երեք և չորեք յարկենի տները քաղաքավար թուրքերուն վառելու և մէջի ոչ սակաւ գոյքերն ու իրեղէններն անմիջապէս կողոպտելու համար:

Միջնքաղէն երեք մարդ աքսորման ատեն կապաւինեն Աչվեն յորջորջեալ բարձր լերան գագաթը, ուր անդ տաճկաց հանդիպելով գերեքն ևս

սպանուած գտանք, թաղման ատեն սպաննելոց դէմքերը տակաւին կը մնար ծանօթ՝ ծանօթաց:

Առաքելական կառավարչի լիազօր՝
Կարապետ վ. Եկանեան

ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 139, թ. 59 և շրջ.:Բնագիր: Ձեռագիր:

ՍԱՍՈՒՆԻ ԵՎ ՏԱՐՈՆԻ ՇՐՋԱԿԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԹՈՒՐՔԵՐԻ ՎԱՐԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱՍՈՒՆՑԻՆԵՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱԳՐԻՑ

1917թ.

Երբ պատերազմը սկսուեց, թիւրք կառավարութիւնը նոյն միջոցներին հայերից զօրք էր ստացած: 1914թ. Մուտիր Տալոյ էֆենդին մաս մը զօրքով ուղարկուեց մեզ մոտ զօրք պահանջելու, բայց մենք ժամանակ շահելով՝ ընդհանրական ժողով ունեցանք և որոշեցինք, որ զօրք չտանք: Քանի որ թիւրտ աշիրեթներից զօրք չի առնում, իսկ մեր երիտասարդները էլ մեզնից հեռացնելով և ուղարկելով կուի վայրը, ուր տասից մեկը չի վերադառնում տուն, և ինքն էլ վատ լինելով մեզ հետ - գուցէ հրաման տայ աշիրեթներին կամ իր զօրքերին մնացած ժողովուրդին կոտորելու: Այս ամենը նկատի ունենալով՝ լաւ համարեցինք, որ մեր երիտասարդները մեզ մոտ մնան մեզ պաշտպանեն և պէտք եղած ժամանակ քաջութեամբ կուին այնպիսիների դէմ, որ չեն թողնում հայոց կրօնն ազատ պաշտել և մշտական կուզեն ջնջել հայերին- քան թէ զատ-զատ կոտորուել:

Յիշեալ Մուտիրը երկրորդ անգամ եկաւ զօրքով, Մշոյ Մութասարիֆ փաշայի հրամանով նրա հետ էր և մեր առաջնորդական տեղապահ Վարդան վարդապետը, և զօրք պահանջեցին նորէն: Մեր ժողովի նախագահ Մանուկ Շառոյեանը պատասխան տուաւ, թէ զօրք չենք տայ, երբ մեր սահմանների քուրդ աշիրեթներից զօրք ստացար, նոյն միջոցին մենք ևս կը յոժարինք տալ, ապա թէ ոչ, չենք տալ: Ինչէ՞ն կլինի, որ երկուսս էլ տերութեան հպատակ ենք, նրանցէն զօրք չէք ստանալ և մեզանից խստիւ կը պահանջէք: Վերադարձան:

Յիշեալ թվի դեկտեմբերին կրկին գալով, յիշեալ Մուտիրը մեզանից մարդ պահանջեց, որ կուի վայրերը շալակով զօրքին ուտելիք հասցնեն: Չլսեցինք և վերադարձաւ: 1915թ. հունվարին բաւական զօրք առած իր հետ նոյն Մուտիրը գիւղէ գիւղ պտտել սկսաւ, որ բռնութեամբ մարդիկ ձեռք անցնէ և տանէ: Առաջ Շէնիք գիւղ հանդիպեց, միջի հայերը լուր տուին Սէմալի, Կալեկուզանի և միւս գիւղերի յառաջադէմ մարդկանց, թէ ինչ ընենք, որովհետև իրենց միտքը բռնութեան վրայ է: Նոր միջոցին Կալեկուզանի գիւղապետ Կիրակոսն իր պէտք եղած ընկերներով մէկտեղ գնացինք Շէնիք Մուտիրին տեսնելու: Վերջնական - մարդ չունինք ձեզ տալու, իզուր կորուստ ունենալ (չենք ուզեր): Նա տեսնելով, որ այն ատեն բռնութիւն չէր կարող գործել՝ առանց ձայնի մեկնեցաւ գնալու:

Այդ տեսակով ձմեռն անցաւ և եկաւ գարունը: Արդէն մենք նկատի ունեցած էինք, որ թուրք կառավարութիւնը առիթ և միջոց գտած է մեզ կոտորելու-, (օգտվելով այն հանգամանքից), որ բոլոր տէրութիւնները պատերազմի մէջ են: Թէև ցանքսեր սկսած էինք, բայց միւս կողմից Յ. Դաշ[նակցութեան] միջոցով գործելով՝ սպասում էինք զէնքեր ու ուժեր ձեռք բերելու, որ գոնէ վրէժներս ստանանք և տղայմարդու պէս մեռնինք:

Նախ և առաջ կռիւներս սկսաւ Բոբ և Կայմաւ գիւղերէն: Արևելեան քիւրտ աշիրեթներ - բալագցիք, բգրցիք, Ուսուֆի տանեցիք և այլն համախմբած էին 2500-ից աւելի զինուած յարձակելու յիշեալ գիւղացոց վրայ կողոպտելու և սպանելու: Նրանց գալը հայեր լսելով և տեսնելով, իրենց ուժը բաւական չէր նրանց դէմ...

ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 150, թ. 1 և շրջ.: Բնագիր: Ձեռագիր:

Վավերագրերը հրապարակման
պատրաստեց ՀԱԱ-ի բաժնի վարիչ՝
Մարինե Մարտիրոսյանը

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

* Անմիջապէս պարզելու համար այդ չէթաի հոն գոյութիւնը, ըսեմ, թէ Մեհմէտ Էմինի և իր կամաւորներուն Կանճառսի մէջ ըրած շահատակութիւններուն վրայ է, որ այդ չէթան գացած էր Կարճկանի ու Կեցանի հայ գիւղերուն օգնության:
** Ստորագրությունն անընթեռնելի է: